ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 21.02.2007
COM (2007) 61 վերջնական

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑ

Կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացի մշտադիտարկման ցուցիչների և հենանիշների կապակցված շրջանակ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑ

Կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացի մշտադիտարկման ցուցիչների և հենանիշների կապակցված շրջանակ

1. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կրթության և ուսուցման քաղաքականությունները կազմում են ԵՄ Լիսաբոնի ռազմավարության էական մասը: Պետությունների ղեկավարները և իշխանությունները ոչ միայն եվրոպական տնտեսության արմատական վերափոխման, այլ նաև ձեռնոց նետող ծրագրի խնդիր դրեցին՝ սոցիալական բարեկեցության և կրթական համակարգերի արդիականացման համար[1]: 2002թ. նրանք նպատակ դրեցին «մինչև 2010թ. եվրոպական կրթության և ուսուցման համակարգերը դարձնել որակի համաշխարհային հենք»[2]:

Որպես օժանդակություն Լիսաբոնի ռազմավարությանը՝ կրթության նախարարներն ընդունեցին կրթության և ուսուցման համակարգերը բարելավելու ընդհանուր նպատակներ ու դրանց հասնելու աշխատանքային ծրագիր, որը հայտնի է «Կրթություն և ուսուցում 2010 ծրագիր» անվանումով[3]: Այն իրագործվում է համակարգման բաց մեթոդի միջոցով, իսկ ցուցիչներն ու հենանիշներն ունեն մշտադիտարկման կարևոր դերակատարություն և խթանում են լավագույն փորձի փոխանակումը:

Այսպիսով, ցուցիչների ու հենանիշների համապարփակ շարք[4] է մշակվել և անընդհատ կատարելագործվել՝ որպես առաջընթացի տարեկան զեկույցների[5], ինչպես նաև Եվրոպական գարնանային խորհուրդներին ուղղված Հանձնաժողովի/Խորհրդի համատեղ զեկույցների[6] պատրաստման հիմք: Ցուցիչների այս շարքը համալրում է կառուցվածքային ցուցիչները[7], որոնք մշտադիտարկում են Լիսաբոնի համընդհանուր նպատակներին ուղղված առաջընթացը:

2005թ. մայիսին Խորհուրդը[8], Հանձանժողովին առաջարկելով ներկայացնել պատասխան հաշվետվություն 2006թ. վերջին, կատարեց հետևյալ հարցադրումը.

---

1 Նախագահության եզրակացություն, Լիսաբոն, պարագրաֆ 2:
2 Նախագահության եզրակացություն, Բարսելոն, պարագրաֆ 43:
3 Խորհրդի և Հանձնաժողովի համատեղ միջանկյալ զեկույց՝ «Կրթություն և ուսուցում 2010. Լիսաբոնի ռազմավարության հաջողությունը կախված է հրատապ բարեփոխումներից /2004թ./»
4 Խորհրդի 2003թ. մայիսի 7-ի եզրակացությունները:
5 Վերջին զեկույցը հրատարակվել է 2006թ. մայիսին, SEC /2006/ 639:
6 Տե՛ս 2006թ. «Կրթություն և ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի իրագործման վերաբերյալ Խորհրդի/Հանձնաժողովի կրթության մասին համատեղ զեկույցը, OJ C79/1 – 1/4/2006:
7 SEC(2004) 1285-2:
8 Կրթության և ուսուցման նոր ցուցիչների վերաբերյալ Խորհրդի 2005թ. մայիսի 24-ի եզրակացությունները (2005/C 141/04):

- *«Գնահատել կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին հասնելու նպատակով ստեղծված ցուցիչների և հենանիշների կապակցված շրջանակի հաստատմանն ուղղված առաջընթացը՝ ներառյալ առկա ցուցիչների համապատասխանության վերանայումը՝ մշտադիտարկելու առաջընթացը»:*

Հանձնաժողովը հետագայում հրավիրվեց՝ զեկուցելու այնպիսի հատվածների նոր ցուցիչների զարգացման մասին, ինչպիսիք են ՏՀՏ ազդեցությունը դասավանդման և ուսումնառության վրա, աշխատաշուկայի արդյունքները շարժունության համար ու բարձրագույն կրթությամբ ուսանողների սոցիալական կարգավիճակը:

Հետևաբար, սույն զեկույցն առաջարկում է կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին հասնելու համար ստեղծված ցուցիչների շրջանակ, որը համապարփակ է և առաջին անգամ է, որ լիարժեքորեն արտահայտում է «Կրթություն և ուսուցում 2010»-ում ավելի մանրամասնորեն սահմանված նպատակները /մաս 2/: Բացի այդ, այն ներառում է նաև «Բոլոնիայի գործընթացում» բարձրագույն կրթությանը և «Կոպենհագենյան գործընթացում» մասնագիտական ուսուցմանն առնչվող նպատակները: Զեկույցը նախագծում է վիճակագրական այն ենթակառուցվածքը, որից կարող են բխել ցուցիչները /մաս 3/: Այն հրավիրում է Խորհրդին ընդունել շրջանակը՝ որպես ռազմավարական ուղղորդում ապահովելու և դեպի «Կրթություն և ուսուցում 2010» ռազմավարությունն ուղղվելու հիմք /մաս 4/:

2. ԼԻՍԱԲՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԵՆԱՆԻՇՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Ցուցիչները և հենանիշները փաստերի վրա հիմնված քաղաքականություն մշակելու և Լիսաբոնի գործընթացի համար էական առաջընթացի մշտադիտարկման առանցքային տարրերն են: Դրանք ապահովում են գործիքներ հետևյալի համար.

- Քաղաքականության առանցքային գաղափարների վիճակագրական հիմնավորում,
- Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացի վերլուծություն և՛ ԵՄ, և՛ ազգային մակարդակներում,
- Լավագույն կատարողականության օրինակների որոշարկում, որը կարող է հավասար վերանայման ու փոխանակման ենթակա լինել,
- ԵՄ կատարողականության համեմատություն երրորդ երկրների կատարողականության հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Ճապոնիան:

29 ցուցիչների ներկայիս շրջանակը /հավելվածը՝ ներքևում/ և 5 հենանիշները ծառայել են՝ մշտադիտարկելու 2004-2006թթ. ժամանակահատվածում մանրամասնորեն սահմանված 13 նպատակներին ուղղված առաջընթացը: Սակայն շրջանակում եղել են շարունակական

փոփոխություններ՝ կատարելագործելու դրա որակը և արտացոլելու ռազմավարության զարգացումը:

Այժմ նոր շրջանակի որոշարկման կարիք կա, որը լիարժեքորեն կարտահայտի «Կրթություն և ուսուցում 2010» ռազմավարության քաղաքական գերակայությունները: Առաջարկվել է, որ հետագայի համար ցուցիչներն ու հենանիշները կազմվեն ռազմավարությունում որոշարկված քաղաքականության ութ առանցքային բնագավառներին համապատասխան: Դրանք են.

2.1. Կրթության և ուսուցման անաչառության կատարելագործում,
2.2. Կրթության և ուսուցման արդյունավետության խթանում,
2.3. Ցկյանս ուսումնառության իրականացում,
2.4. Երիտասարդների առանցքային կարողություններ,
2.5. Հանրակրթության արդիականացում,
2.6. Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում /Կոպենհագենի գործընթաց/,
2.7. Բարձրագույն կրթության արդիականացում /Բոլոնիայի գործընթաց/,
2.8. Աշխատունակություն:

Սույն շրջանակին կաջակցի 20 առանցքային ցուցիչների կենտրոնացած մի շարք, իսկ ցուցչային հատվածներին անհրաժեշտ դեպքում /աղյուսակը տե՛ս այս մասի վերջում/ կաջակցեն համատեքստային հավելյալ ցուցիչները: Սա կնշանակի, որ առանցքային ցուցիչները հետագայում կգործեն ընդհանրացման ավելի բարձր մակարդակում, քան սրանից առաջ: Այնուամենայնիվ, կիրառելով համատեքստային ցուցիչներ, առաջընթացը գնահատելիս չպետք է նկատելի որևէ մանրուքի կորուստ լինի՝ համեմատելով առկա շրջանակի հետ: Առաջարկը հենվում է Eurydice-ի եվրոպական բաժանմունքի, Cedefop-ի և Ispra-ում համատեղ հետազոտության կենտրոնի CRELL աշխատանքի[9], ինչպես նաև ցուցիչներով և հենանիշներով զբաղվող մշտապես գործող խմբի կարծիքների վրա:

2.1. Կրթության և ուսուցման անաչառության կատարելագործում

Կրթության և ուսուցման եվրոպական համակարգերի և՛ արդյունավետությունը, և՛ անաչառությունը երաշխավորելու պահանջը վերջերս՝ մինչև 2006թ., կրկին շեշտվեց Եվրոպական գարնանային խորհրդի կողմից[10]: Ինչպես նշված է Արդյունավետության և անաչառության վերաբերյալ զեկույցում, կրթության և ուսուցման անաչառությունն ուսումնասիրելը կնշանակի վերլուծել այն չափաքանակը, որով «անհատները կարող են լիարժեքորեն օգտվել կրթությունից և ուսուցումից մուտքի հնարավորության,

[9] Ցկյանս ուսումնառության հետազոտության կենտրոն՝ հիմնված ցուցիչների և հենանիշների վրա (Ispra, I), Համատեղ հետազոտության կենտրոն:

[10] Եվրոպական Խորհուրդ, 2006թ. մարտի 23-24, Նախագահության եզրակացություններ, պարագրաֆ 23

վարվեցողության և արդյունքների առումով[11]»: Խորհուրդն ընդունեց հենանիշ դպրոցը վաղ լքողների համար՝ դրա շնորհիվ ճանաչելով անաչառության գլխավոր կարևորությունը ցկյանս ուսումնառությունում և ներկայիս աճող մրցակից հասարակություններում արդյունավետ մասնակցության համար: Բացի այդ, առանձնահատուկ այնպիսի հիմնախնդիրները, ինչպիսիք են սեռային հավասարության խթանումը, ազգային փոքրամասնությունների միասնականացումը, անաշխատունակ անձանց ներգրավումը, տարածաշրջանային անհամապատասխանությունների կրճատումը, պետք է մշտադիտարկվեն:

Առանցքային ցուցիչները՝ *մասնակցություն նախադպրոցական կրթությանը* /1/[12], հատուկ *կարիքներով անձանց կրթություն* /2/ և *դպրոցը վաղ լքողներ* /3/, կօգտագործվեն՝ մշտադիտարկելու առաջընթացը: Բացի դա, անաչառությունը կվերլուծվի ուսումնառուների սեռային, տարիքային և սոցիալ-տնտեսական կարգավիճակի մասին տվյալները տարալուծելու միջոցով: *Կրթության և ուսուցման համակարգերի շերտավորման* /13/ վերաբերյալ Eurydice-ի որակական տվյալների վրա հիմնված, բաղադրիչներից բաղկացած ցուցիչ կօգտագործվի՝ վերլուծելու կրթության և ուսուցման համակարգերի կառուցվածքի և ինստիտուցիոնալ զանազանության ներգործությունը[13]: Կնախաձեռնվի անաչառության վերաբերյալ բաղադրիչներից բաղկացած ցուցչի մշակման աշխատանք: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչներն են՝ 1, 2, 3 և 13:

2.2. Կրթության և ուսուցման արդյունավետության խթանում

Ռեսուրսների լավագույնս օգտագործման կարևորությունը ևս արտահայտվել է Կրթության և ուսուցման մեջ արդյունավետություն ներմուծելու վերաբերյալ զեկույցում (2003)[14], համատեղ միջանկյալ զեկույցում (2006)[15] և Խորհրդի 2006թ. մարտի եզրակացություններում[16]: Վերջերս «Արդյունավետություն և անաչառություն կրթության ու ուսուցման եվրոպական համակարգերում» զեկույցը[17] ցույց տվեց, որ արդյունավետության բարելավումը վտանգի չի ենթարկում կրթության համակարգերի անաչառությունը, իսկ արդյունավետության ու անաչառության զարգացումները կարող են տեղի ունենալ միաժամանակ:

---

11 Հանձնաժողովի զեկույցը Խորհրդին և Եվրոպական Կառավարությանը՝ «Արդյունավետություն և անաչառություն կրթության և ուսուցման եվրոպական համակարգերում», COM (2006) 481

12 Տե՛ս աղյուսակը մաս 2-ի վերջում:

13 EURYDICE, Կրթության մասին առանցքային տվյալներ Եվրոպայում

14 COM (2002) 779 վերջնական, 2003թ. հունվարի 10

15 Կրթության և ուսուցման արդիականացում Եվրոպայում. կարևորագույն օժանդակություն բարգավաճմանն ու սոցիալական միասնությանը Եվրոպայում, Պաշտոնական հանդես, C 79/1, 2006թ. ապրիլի 1:

16 Բրյուսելի Եվրոպական Խորհուրդ, 2006թ. մարտի 23/24, Նախագահության եզրակացությունները, http://www.consilium.europa.eu/ueDocs/cms_Data/docs/pressData/en/ec/89013.pdf

17 COM (2006) 481

Կրթության և ուսուցման մեջ ներդրման /19/ գլոբալ ցուցիչը դեռևս համարվում է կարևոր: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել մասնավոր և պետական, ինչպես նաև բարձրագույն կրթության մեջ ներդրմանը, որը, համեմատած գլոբալ մրցակիցների հետ, համեմատաբար անբավարար է ֆինանսավորվում:

Այնուամենայնիվ, միայն ներդրման ցուցիչները չեն կարող ապահովել ներդրման արդյունավետությունը, որը կապված է մուտքի և ելքի տվյալների կամ արդյունքների հարաբերակցության հետ: Ներդրման արդյունավետության համար բաղադրիչներից կազմված ցուցիչներ ստեղծելու նպատակով մեթոդաբանական և հայեցակարգային մշակումներ կիրականացվեն՝ գործակցելով CRELL-ի հետ: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչն է՝ 19:

2.3. Ցկյանս ուսումնառության իրականացում

Ցկյանս ուսումնառությունը խիստ կարևոր է ոչ միայն մրցունակության, աշխատունակության և տնտեսական բարգավաճման, այլ նաև գիտելիքահենք տնտեսությունում ապրող և աշխատող մարդկանց սոցիալական համախմբվածության, ակտիվ քաղաքացիության և անձնական գոհունակության համար[18]:

Մասնակցությունը կրթությանն ու ուսուցմանը տեղի է ունենում տարբեր միջավայրերում և տարբեր միջոցներով՝ ներառյալ ՏՀՏ-ն: Առնվազն ավագ միջնակարգ կրթությունն ավարտելը համարվում է էական գործոն մասնագիտական կարիերայի և ցկյանս ուսումնառությանը լիարժեքորեն մասնակցելու համար: Խորհուրդը մինչև 2010թ. համար ընդունել է հենանիշ երիտասարդների առնվազն 85%-ի համար, ովքեր պետք է ավարտեն ավագ միջնակարգ կրթությունը: Մեծահասակների հմտությունների արդիականացումն ու կատարելագործումը ևս շեշտվեցին Խորհրդի կողմից մինչև 2010թ. ցկյանս ուսումնառությանը մասնակցող մեծահասակ բնակչության 12.5% հենանիշի ընդունմամբ[19]:

Ցկյանս ուսումնառությունն իրականություն դարձնելիս մշտադիտարկման գործընթացը կընդգրկի առանցքային ցուցիչներ *ցկյանս ուսումնառությանը մեծահասակների մասնակցության* /16/ և *մեծահասակների հմտությունների* /17/ վերաբերյալ, որը թույլ կտա բնակչության տարբեր տարիքային խմբերի մուտքի հնարավորության և մասնակցության, ինչպես նաև հմտությունների մակարդակների վերլուծություն: *Ավագ միջնակարգ կրթությունն ավարտող երիտասարդների ցուցանիշների* /9/ ցուցիչը կմշտադիտարկի եվրոպական հենանիշը և երիտասարդների պատրաստակամությունը՝ մասնակցելու ցկյանս

---

18 Նախագահության եզրակացությունները, Լիսաբոն, 2000թ. մարտի 23/24

19 Կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական միջին կատարողականության հենքային մակարդակների վերաբերյալ Խորհրդի 2003թ. մայիսի 5/6-ի եզրակացությունները (Հենանիշներ): (2003/C 134/02), http://europa.eu.int/eurlex/pri/oj/dat/2003/c_134/c_13420030607en00030004.pdf

ուսումնառությանը: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչներն են՝ 9, 16 և 17:

2.4. Երիտասարդների առանցքային կարողություններ[20]

2000թ.-ին Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը եկավ այն եզրակացության, որ եվրոպական շրջանակը պետք է սահմանի առանցքային նոր հմտություններ՝ որպես գլոբալացմանն ու գիտելիքահենք տնտեսությունների փոփոխմանն ուղղված գլխավոր քայլ: Բարսելոնի Եվրոպական Խորհուրդը[21] կրկին շեշտեց առանցքային հմտությունները կատարելագործելու կարիքը: 2002թ.-ին Խորհուրդը ցկյանս ուսումնառության[22] և «առանցքային նոր հմտություններ»-ի վերաբերյալ որոշում ընդունեց: Հանձնաժողովն ընդունել է երաշխավորություն Ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ[23], որը որոշարկում է այն ութ կարողությունները, որոնք ամենաշատն են համապատասխանում արդի կյանքին և աշխատանքին գիտելիքահենք հասարակությունում[24]:

Գիտակցելով առանցքային հմտություններ ձեռք բերելու կարևորությունը՝ Խորհուրդն ընդունեց հատուկ հենանիշ այս ոլորտում՝ մասնավորապես կրճատելու ԵՄ գրաճանաչության ցածր մակարդակ ունեցող 15 տարեկան երիտասարդների ցուցանիշն առնվազն մինչև 20%՝ համեմատած 2000թ. հետ:

Առանցքային ցուցիչներն ընդգրկում են հետևյալ առանցքային կարողությունները՝ *գրաճանաչություն, մաթեմատիկա և գիտություն* /4/, *լեզվի հմտություններ* /5/, *ՏՀՏ հմտություններ* /6/, *քաղաքացիությանն առնչվող հմտություններ* /7/ *և սովորելու համար սովորել հմտություններ* /8/: Քաղաքականության սույն հատվածի ցուցիչներն են՝ 4, 5, 6, 7 և 8:

---

20 Այստեղ առանցքային կարողություններ ասելով՝ հասկանում ենք այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են բոլոր անհատներին անձնական գոհունակության և զարգացման, ակտիվ քաղաքացիության, սոցիալական ներգրավման և զբաղվածության համար:

21 Նախագահության եզրակացությունները, Բարսելոն, 2002թ. մարտի 15/16, http://ue.eu.int/ueDocs/cms_Data/docs/pressData/en/ec/71025.pdf

22 Ցկյանս ուսումնառության վերաբերյալ Խորհրդի 2002թ. հունիսի 27-ի որոշում, Պաշտոնական հանդես C163/01, 9.7.2002

23 Ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի երաշխավորության համար առաջարկ, COM (2005) 548 վերջնական, 10.11.2005

24 Հաղորդակցություն մայրենի լեզվով, օտար լեզուներով, մաթեմատիկական կարողություն և առանցքային կարողություններ գիտության մեջ և տեխնոլոգիայում, թվերի կիրառման կարողություն, սովորել սովորելու համար, միջանձնային, միջմշակութային և սոցիալական ու քաղաքացիությանն առնչվող կարողություններ, ձեռներեցություն և մշակութային արտահայտություն

2.5. Հանրակրթության արդիականացում

Լիսաբոնի եզրակացությունները որոշարկեցին ուսումնական պլանը[25] և կազմակերպական նյութերը[26] որպես գլխավոր հիմնախնդիրներ, որոնց պետք է արձագանքել Լիսաբոնի ռազմավարությունում: Խորհուրդը նշեց, որ այնպիսի գործիքը, ինչպիսին է դպրոցի ինքնագնահատումը, էական է և ընդգծեց այսպիսի գործիքների օգտագործման ու կառավարման ուսուցմանն աջակցելու կարիքը[27]:

Ուսուցչի կրթության որակի կատարելագործումը և երաշխավորումը, որ մասնակից բոլոր ուսուցիչները մասնակցում են մասնագիտական շարունակական զարգացմանը, որոշարկվել են որպես հանրակրթության որակի ապահովման առանցքային գործոններ[28]:

Սույն բնագավառի առաջընթացի մշտադիտարկումը կընդգրկի հետևյալ հատվածների առանցքային ցուցիչները՝ *դպրոցը վաղ լքողներ* /3/, *դպրոցի կառավարում* /10/, *դպրոցները՝ որպես տեղական ուսումնառության բազմանպատակ կենտրոններ* /11/ և *ուսուցիչների ու դասընթացավարների մասնագիտական զարգացում* /12/: Eurydice-ը կապահովի տեղեկատվություն հանրակրթության կազմակերպական կառուցվածքների մասին[29]: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչներն են՝ 3, 10, 11 և 12:

2.6. Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում

Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում ընդլայնված համագործակցության համար ձեռնարկված կոպենհագենյան գործընթացը[30] ենթադրում է, որ բարեփոխումն ու ներդրումը /այլ հիմնախնդիրների շարքում/ պետք է կենտրոնացած լինեն հետևյալի վրա՝ մասնագիտական կրթության պատկերի և գրավչության բարելավում գործատուների համար, ՄԿՈՒ մասնակցության մեծացում և նախնական մասնագիտական կրթության և ուսուցման որակի ու ճկունության կատարելագործում:

Սույն բնագավառի առաջընթացի մշտադիտարկումը կընդգրկի *ավագ միջնակարգ կրթությունն ավարտող երիտասարդների ցուցանիշի վերաբերյալ* /9/ առանցքային ցուցիչը: Այն կետում, որտեղ նախնական մասնագիտական կրթությունն ու ուսուցումը հասանելի է

---

25 Եվրոպական շրջանակը պետք է սահմանի ցկյանս ուսումնառության կողմից ապահովվող առանցքային նոր հմտություններ, Նախագահության եզրակացություններ (Լիսաբոն 2000):

26 Դպրոցներն ու ուսուցման կենտրոնները, որոնք բոլորը կապված են ինտերնետի հետ, պետք է դառնան ուսումնառության բազմանպատակ կենտրոններ՝ հասանելի բոլորին: Նախագահության եզրակացություն, Լիսաբոն (2000):

27 Հանրակրթության որակի գնահատման հատվածում եվրոպական համագործակցության վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2001թ. փետրվարի 12-ի երաշխավորություն: (Պաշտոնական հանդես L 60, 01.03.2001):

28 Տե՛ս Ուսուցչի կարողությունների և որակավորումների եվրոպական ընդհանուր սկզբունքներ՝ http://ec.europa.eu/education/policies/2010/doc/principles_en.pdf

29 Տե՛ս Կրթության վերաբերյալ 2005թ. առանցքային տվյալներ Եվրոպայում:

30 Եվրոպական Հանձնաժողով. ՄԿՈՒ օժանդակությունը, Եվրոպական Հանձնաժողովին ներկայացված վերջնական զեկույց 1-11-04, http://europa.eu.int/comm/education/policies/2010/studies/maastricht_en.pdf

կրթության և ուսուցման համակարգի կառուցվածքում, կվերլուծվի *կրթության և ուսուցման համակարգերի շերտավորման* /13/ ցուցչի միջոցով: Շարունակական մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը մասնակցության համատեքստային ցուցիչը հնարավորություն կտա ձեռնարկություններին վերլուծել իրենց դերակատարությունը գործառուների շարունակական մասնագիտական ուսուցմանը մասնակցության և դրա ֆինանսավորման գործում: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչներն են՝ 9 և 13:

2.7. Բարձրագույն կրթության արդիականացում

Բարձրագույն կրթության արդիականացումը խիստ անհրաժեշտ է ԵՄ՝ գիտելիքահենք մրցունակ տնտեսություն դառնալու նպատակի համար[31]:

Հանձնաժողովը շեշտել է, որ եվրոպական բարձրագույն կրթության հատվածը համեմատաբար քիչ է ֆինանսավորվում, քան գլոբալ այլ մրցակիցներինը[32]: Ելնելով եվրոպական հետազոտության մեջ համալսարանների էական դերակատարությունից՝ ԵՄ մինչև 2010թ. R&D-ի /Հետազոտություն և զարգացում/ մեջ ՀՆԱ 3% ներդնելու նպատակը կենթադրի ավելի մեծ ներդրումներ համալսարանի վրա հիմնված հետազոտության համար[33]: Հանձնաժողովը նաև առաջարկել է հենանիշ՝ մինչև 2015թ. հատկացնելու ՀՆԱ առնվազն 2% /ներառյալ և՛ պետական, և՛ մասնավոր ֆինանսավորումը/ արդիականացված բարձրագույն կրթության հատվածին:

Խորհուրդը սահմանել է եվրոպական հենանիշ՝ մինչև 2010թ. 15%-ով մեծացնելու մաթեմատիկայի, գիտության և տեխնոլոգիայի գծով շրջանավարտների թվաքանակը:

Բոլոնիայի գործընթացն ունի էական դերակատարություն: Դրա նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք /2010թ. համար սահմանված նպատակ/, որտեղ բարձրագույն կրթությամբ ուսանողների և աշխատողների շարժունությունը հնարավոր կլինի դարձնել ավելի հեշտ՝ որպես Բակալավր – Մագիստրոս - Դոկտոր աստիճանային կառուցվածքի հետևանք:

---

31 Ինֆորմալ Եվրոպական Խորհուրդ Hampton Court-ում (2005թ. հոկտեմբեր), Զեկույց՝ «Եվրոպական արժեքները գլոբալիզացված աշխարհում, Հանձնաժողովի օժանդակությունը պետության ղեկավարների և իշխանության հոկտեմբերին կայացած հանդիպմանը» COM (2005) 525:

32 Եվրոպայի գիտաշխատողների շարժունացում, հնարավորության ընձեռում համալսարաններին՝ լիարժեքորեն օժանդակելու Լիսաբոնի ռազմավարությանը, COM (2005) 152:

33 Տե՛ս «Ավելի շատ հետազոտություն և նորարարություն. ներդրում աճի և զբաղվածության համար, ընդհանուր մոտեցում», COM (2005) 488, 2005թ. հոկտեմբերի 12: R&D մեջ ներդրումների մի մասը գնում է բարձրագույն ուսումնական հաստատությունների համար համընդհանուր ներդրումներին:

Սույն բնագավառի առաջընթացի մշտադիտարկումը կընդգրկի հետևյալ հատվածների առանցքային ցուցիչները՝ *բարձրագույն կրթության շրջանավարտներ* /14/, *բարձրագույն կրթության մեջ ուսանողների խաչաձև տեղանքային շարժունություն* /15/ և *ներդրում կրթության և ուսուցման մեջ* /19/: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչներն են՝ 14, 15 և 19:

2.8. Աշխատունակություն

Զբաղվածության ցուցանիշների մեծացումը Լիսաբոնի ռազմավարության հաջողության ամենակարևոր չափանիշների շարքում է[34]: Եվրոպական խորհուրդների կողմից հստակ նպատակներն են սահմանվել զբաղվածության համընդհանուր ցուցանիշների, տարեց աշխատողների, կանանց զբաղվածության ցուցանիշների վերաբերյալ[35]: Զբաղվածության կարևորությունն ամրապնդվեց ռազմավարության վերամեկնարկումով[36]: Կրթական մակարդակը և առանցքային կարողությունները, որոնք ներառում են ձեռներեցությունը, անհատի աշխատունակությունն ու կյանքի ընթացքում հարմարվողականությունը, վճռորոշ գործոններն են[37]: Աշխատունակության ոլորտում առաջընթացը մշտադիտարկելու առանցքային ցուցիչը կլինի *բնակչության կրթության ձեռքբերումը* /18/ և *մեծահասակների հմտությունները* /17/: Այս ցուցիչը կվերլուծվի *կրթության և ուսուցման շահույթների* /20/ հետ միասին: Հետագա տվյալները նախատեսվում են ստացվել երիտասարդների՝ աշխատաշուկա մուտք գործելու ժամանակ[38]: Կնախաձեռնվի բաղադրիչներից կազմված ցուցչի մշակման աշխատանք: Քաղաքականության սույն հատվածի առանցքային ցուցիչները կլինեն՝ 17, 18 և 20:

2.9. Եզրակացություն

Սույն երաշխավորության վերոնշյալ մասը հանգեցրել է 20 առանցքային ցուցիչների որոշարկմանը, որոնք կապակցված են «Կրթություն և ուսուցում 2010» ռազմավարությունում որոշարկված քաղաքական գերակայություններին: Խորհուրդը հրավիրվել է՝ ընդունելու այս 20 ցուցիչները ռազմավարական ուղղորդում ապահովելու համար:

---

34 Նախագահության եզրակացությունները, Լիսաբոն (2000):
35 Տե՛ս Նախագահության եզրակացությունները, Լիսաբոն (2000):
36 Նախագահության եզրակացությունները, Բրյուսել (2006):
37 Եվրոպական բարձրագույն կրթությունը համաշխարհային հեռանկարում, SEC(2005) 518:
38 2009թ. աշխատուժի ուսումնասիրության մոդուլ

Կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացի մշտադիտարկման 20 առանցքային ցուցիչներ	
1) Մասնակցություն նախադպրոցական կրթությանը 2) Հատուկ կարքներով անձանց կրթություն 3) Դպրոցը վաղ լքողներ 4) Գրաճանաչություն, մաթեմատիկա և գիտություն 5) Լեզվի հմտություններ 6) ՏՀՏ հմտություններ 7) Քաղաքացիությանն առնչվող հմտություններ 8) Սովորել սովորելու համար հմտություններ 9) Ավագ միջնակարգ կրթությունն ավարտող երիտասարդների ցուցանիշը 10) Դպրոցի կառավարում	11) Դպրոցները՝ որպես տեղական ուսումնառության բազմանպատակ կենտրոններ 12) Ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացում 13) Կրթության և ուսուցման համակարգերի շերտավորում 14) Բարձրագույն կրթության շրջանավարտներ 15) Բարձրագույն կրթությամբ ուսանողների խաչաձև տեղանքային շարժունություն 16) Մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը 17) Մեծահասակների հմտություններ 18) Բնակչության կրթության ծեռքբերում 19) Ներդրում կրթության և ուսուցման մեջ 20) Կրթության և ուսուցման շահույթներ

Ինն առանցքային ցուցիչները՝ (1), (3), (4), (9), (14), (15), (16), (18) և (19), արդեն առկա են և օգտագործվել են կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը մշտադիտարկելու համար: Մնացյալ 11 առանցքային ցուցիչները կապված են այն հատվածների հետ, որտեղ զարգացման աշխատանքը դեռ շարունակվում է: Համապատասխանաբար, ցուցիչների կապակցված շրջանակը ևս գտնվում է զարգացման գործընթացում: Այս գործիքը համալրվում է 2010թ. համար Խորհրդի կողմից ընդունված եվրոպական ներքոհիշյալ հինգ հենանիշներով, որոնք շարունակում են համարվել էական

գործիքներ կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը մշտադիտարկելու համար[39]: Այս հենանիշերից մի քանիսն ունեն կարևոր դերակատարություն՝ որպես ԵՄ զբաղվածության ռազմավարության ներքո գտնվող թիրախներ:

1) **Դպրոցը վաղ լքողների ոչ ավել, քան 10%**

2) **Գրաճանաչության ցածր մակարդակ ունեցող աշակերտների ցուցանիշի առնվազն 20% նվազեցում**

3) **Ավագ միջնակարգ կրթությունն ավարտած երիտասարդների առնվազն 85%**

4) **Մաթեմատիկայի, գիտության և տեխնոլոգիայի գծով շրջանավարտների թվաքանակի առնվազն 15% աճ՝ սեռային անհավասարության նվազեցմանը զուգահեռ**

5) **Ցկյանս ուսումնառությանը մասնակցող մեծահասակ բնակչության 12.5%**

3. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԵՆԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ցուցիչների և հենանիշների վերոհիշյալ շրջանակին աջակցող տվյալները գալիս են Եվրոպական վիճակագրական համակարգից /ԵՎՀ/ /մաս 3.1/ և առաջիկայում մեկնարկվելիք նոր կամ միջազգային այլ ուսումնասիրություններից, որտեղ եվրոպական տվյալներն ի նկատի են առնվել /մաս 3.2/:

ԵՎՀ-ն հավատարիմ է մնում Փորձի եվրոպական վիճակագրական կոդին, ինչպես հիշատակվում է ազգային և համայնքային վիճակագրական վերահսկող մարմինների անկախության, ամբողջականության և պատասխանատվության վերաբերյալ Հանձնաժողովի երաշխավորությունում[40]: Ցանկալի է, որ կապակցված շրջանակում օգտագործվող բոլոր տվյալները ենթարկվեն այս կոդի տվյալների պաշարին:

---

39 Խորհրդի եզրակացություններ (2003): Այս հինգ հենանիշերին աջակցող ցուցիչներ են ընդգրկվել զեկույցում նախագծված 20 ցուցիչների կապակցված գործիքում:

40 COM(2005)217, Փորձի եվրոպական վիճակագրական կոդը հիմնված է 15 սկզբունքների վրա: ԵՄ իշխանությունը և վիճակագրական վերահսկող մարմինները պարտավորվել են հավատարիմ մնալ այս կոդում ամրագրված սկզբունքներին, որոնք ընդգրկում են տնտեսահրավական միջավայրը, վիճակագրական գործընթացներն ու ելքի տվյալները /կամ արդյունքները/:

3.1. Եվրոպական վիճակագրական համակարգի /ԵՎՀ/ կողմից ապահովվող տվյալների վրա հիմնված ցուցիչներ

ԵՎՀ-ում տվյալների ստեղծման համար անհրաժեշտ վիճակագրական ենթակառուցվածքը տվյալների մի քանի աղբյուրների /ուսումնասիրություններ և վարչականորեն հավաքագրված տվյալներ/, ընդհանուր գործիքների և մեթոդաբանությունների /ձեռնարկներ, դասակարգումներ, ռեգիստրներ, սահմանումներ, հայեցակարգեր և այլն/ համակցություն է: Համապատասխան ազգային ենթակառուցվածքները, որոնք ի վիճակի կլինեն հրամցնել ներդաշնակ տվյալներ, խիստ կարևոր են՝ երաշխավորելու համեմատականություն, քանի որ ԵՄ վիճակագրությունը ստեղծվում է ազգային վիճակագրական համակարգերի հիման վրա:

ԵՄ մակարդակում կան մի քանի հատուկ աղբյուրներ, որոնք ապահովում են տեղեկատվություն կրթության և ուսուցման մասին. դրանք բաժանվում են երկու խմբի:

Նախ, գոյություն ունի UNESCO/ՏՀԶԿ, OECD/Eorostat-ի /UOE/ կողմից անդամ պետություններում ֆորմալ կրթության համակարգերի հետ կապված տվյալների տարեկան հավաքագրում /անդամագրում, կրթական գործընթացներն ավարտելը, անձնակազմ, կրթական ֆինանսավորում և այլն/, այնուհետև Շարունակական մասնագիտական ուսուցման 5-ամյա ուսումնասիրությունը /ՇՄՈՒՈՒ/, որը հավաքագրում է ուսուցման մասին տեղեկատվություն ձեռնարկության մակարդակում, Մեծահասակների կրթության 5-ամյա ուսումնասիրությունը /ՄԻԿՈՒ/, որն ապահովում է տեղեկատվություն մեծահասակների ուսումնառության ձևաչափերի մասին և ընդգրկում է շրջանակի հետևյալ ցուցիչները՝ *մասնակցություն նախադպրոցական կրթությանը* /1/, *ՏՀՏ հմտություններ* /6/, *բարձրագույն կրթության շրջանավարտներ* /14/, *բարձրագույն կրթությամբ ուսանողների խաչաձև տեղանքային շարժունություն* /15/, *մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը* /16/ և *ներդրում կրթության և ուսուցման մեջ* /19/:

Մյուս կողմից, այս հատուկ ուսումնասիրությունները համալրվում են տեղեկատվության ընդհանուր այնպիսի աղբյուրներով, ինչպիսիք են Աշխատուժի ուսումնասիրությունը /ԱՈՒՈՒ/ և եկամուտների ու ապրուստի պայմանների վերաբերյալ ԵՄ ուսումնասիրությունը /առաջիկա ԵԱՊՈՒ/: Այսպիսի ուսումնասիրություններն ապահովում են տեղեկատվություն կրթության և ուսուցման վերաբերյալ, որը կարելի է կապակցել սոցիալ-տնտեսական փոփոխականություններին: Բացի այդ, ուսումնասիրություններին կցված նեղ մասնագիտական մոդուլները ևս ապահովում են տեղեկատվություն կրթության մասին, սակայն ավելի անկանոն ժամանակամիջոցներում: Հատուկ այլ աղբյուրներն ապահովում են տվյալներ մասնագիտացված թեմաների մասին հետևյալ ցուցիչների համար՝ *դպրոցը վաղ լքողներ* /3/, *ՏՀՏ հմտություններ* /6/, *ավագ միջնակարգ կրթությունն ավարտող երիտասարդների ցուցանիշներ* /9/, *մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը* /16/, *բնակչության կրթության ձեռքբերումը* /18/ և *կրթության և ուսուցման*

շահույթները /20/: *Հատուկ կարիքներով անձանց կրթության* /2/ վերաբերյալ տվյալների հավաքագրման հնարավորություն կստեղծվի:

Ավելին, ԵՎՀ աղբյուրները մուտքի տվյալների, գործընթացների, ելքի տվյալների ու արդյունքների առումով ապահովում են կրթական համակարգերը բնութագրող ցուցիչների մեծ թվաքանակ: Այսպիսի համատեքստային ցուցիչները տալիս են երկրի կատարողականության ավելի մանրամասն ու լիարժեք պատկեր և օգտագործվում են վերլուծությունը հետագայում ընդլայնելու համար: Դրանք Eurostat-ի կողմից հրատարակվում են կանոնավոր ժամանակամիջոցներում:

Eurostat-ը և ԵՎՀ-ն մշտապես շահագրգռված են՝ պահպանելու վիճակագրության որակը, մասնավորապես այն ոլորտների ճանաչման և որոշարկման միջոցով, որտեղ բարելավում և հետագա աշխատանք է պահանջվում: ՍՕԵ-ի տվյալների հավաքագրումը ներկայումս ենթարկվում է որակի վերանայման, որը կհանգեցնի զարգացումների բազմամյա պլանավորման:

Կրթության և ցկյանս ուսումնառության վերաբերյալ վիճակագրություն ստեղծելու և մշակելու նպատակով տվյալների տրամադրումն ու որակն ապահովելու համար Հանձնաժողովն առաջարկել է կանոնակարգ[41]: Այս շրջանակի կանոնակարգը սահմանում է ընդգրկվելիք բնագավառները, որակի պահանջները, ինչպես նաև իրագործվող որոշ քայլերը: Սույն կանոնակարգն ընդունելուն պես Հանձնաժողովը մտադրություն ունի նախաձեռնել Հանձնաժողովի՝ իրագործման ենթակա հատուկ գործողություններ, որոնք կընդգրկեն ՍՕԵ-ի տվյալների հավաքագրումը և ՄԻԿՈՒ-ն:

Ազգային մակարդակում միջազգայնորեն համեմատելի տվյալներ ստանալու արագ աճող հետաքրքրություն է նկատվում: Որոշ երկրներ, հետևաբար, մշակում են վիճակագրական ենթակառուցվածքներ գրանցման համակարգերի և/կամ երկարաժամկետ/խմբային ուսումնասիրության գործիքների մասով՝ ավելի լավ ի վիճակի լինելու տրամադրել տեղեկատվություն դպրոցի և ուսանողի մակարդակում:

Այսպիսի զարգացումներ են տեղի ունենում եվրոպական մակարդակում ազգային համակարգերից եկող տեղեկատվությունն ի վերջո օգտագործելու նպատակով /ամբողջական մակարդակում/: Ուսանողի մակարդակում այսպիսի նոր զարգացումներն ուսանողների կարիերայի ավելի լավ ապագայի հնարավորություն են տալիս, իսկ ուսումնական հաստատությունների /ներառյալ դպրոցներ, համալսարաններ և այլն/ դեպքում այն կարող է բարելավել վստահելի շրջանակներ հաստատելու հնարավորությունները,

[41] Եվրոպական Կառավարության և Խորհրդի՝ կրթության և ցկյանս ուսումնառության վերաբերյալ վիճակագրության ստեղծմանն ու մշակմանն առնչվող կանոնակարգ ստեղծելու առաջարկ, COM(2005)625

ինչպես նաև ծառայել որպես հանրակրթական համակարգերի մասին բազային տեղեկատվության աղբյուր, որը կարելի է օգտագործել եվրոպական ամբողջական մակարդակում: ԵՎՀ-ի այս նախաձեռնություններին Հանձնաժողովը պետք է խրախուսի ցուցիչների համատեքստում՝ *դպրոցի կառավարում* /10/, *դպրոցները՝ որպես տեղական ուսումնառության բազմանպատակ կենտրոններ* /11/, *ուսուցիչների և դասընթացավարների մասնագիտական զարգացում* /12/ և *կրթության և ուսուցման համակարգերի շերտավորում* /13/:

3.2. Եվրոպական վիճակագրական համակարգից դուրս ստացվող տվյալների վրա հիմնված ցուցիչներ

ԵՎՀ-ն չի կարող ապահովել վիճակագրական ենթակառուցվածք Խորհրդի 2005թ. մայիսի 24-ի եզրակացություններում պահանջվող կամ սույն երաշխավորությունում ներկայացված ցուցիչների ու հենանիշների շրջանակի բոլոր ցուցիչների համար[42]:

Eurydice-ի[43] գործունեությունը և Cedefop-ը տրամադրում են սույն զեկույցում ներկայացված շրջանակին աջակցող համատեքստային տվյալներ և ցուցիչներ: Այս տվյալները ստեղծվում են Eurostat-ի հետ գործակցության միջոցով:

ՏՀԶԿ-ն ձևավորում է ցուցիչներ *գրաճանաչության, մաթեմատիկայի և գիտության* /4/ վերաբերյալ PISA-ի ուսումնասիրության[44] միջոցով և համակարգում է մի քանի նոր ցուցիչների վերաբերյալ զարգացող աշխատանքը /տե՛ս ներքևում/:

Ներկայումս որոշ ուսումնասիրություններ են պատրաստվում Հանձնաժողովի կողմից երկու տարբեր հատվածներում՝ երիտասարդների *օտար լեզվի հմտություններ* և *սովորել սովորելու համար հմտություններ:* Երկու դեպքում էլ Խորհուրդը մանրամասն ուսումնասիրության առաջարկների խնդիր դրեց, որոնք պետք է ներկայացվեն հենց Խորհրդին[45]:

- **Լեզվի հմտությունների /5/** հատվածում Հանձնաժողովն առաջարկեց մեթոդներ՝ գործիքների մշակելու նպատակով տվյալներ հավաքագրելու և լեզվի կարողության եվրոպական ցուցիչը[46] համալրելու համար: Սույն զեկույցի և Խորհրդի եզրակացությունների (2006թ. մայիս)[47] հիման վրա Հանձնաժողովը կազմավորել է Ազգային ներկայացուցիչների խորհրդատվական խորհուրդ:
- **Սովորել սովորելու համար հմտությունների /8/** հատվածում «Կրթական համակարգերի գնահատման քաղաքականություն մշակողների եվրոպական

---

42 OJ (2005/C 141/04) 10.6.2005:
43 Eurydice-ի եվրոպական բաժանմունք և Eurydice-ի ազգային բաժանմունքների ցանց:
44 Ուսանողի միջազգային գնահատման ծրագիր:
45 Խորհրդի եզրակացություն (2005թ. մայիս):
46 «Լեզվի կարողության եվրոպական ցուցիչ» COM (2005) 356 1/8 2005:
47 Լեզվի կարողության եվրոպական ցուցչի վերաբերյալ Խորհրդի եզրակացություններ (2006/C 172/01):

ցանցը» գնահատել է խաչաձև տեղանքային թռիչքային ուսումնասիրության շրջանակում առկա մեթոդաբանությունների իրագործման ճկունությունը: Հանձնաժողովին ներկայացվել է ուսումնասիրության գործիքի մշակման վերաբերյալ երաշխավորություն: Հանձնաժողովն այժմ կստեղծի կառավարման համապատասխան համակարգեր ուսումնասիրության գործիքի մշակման և թռիչքային ծրագրի համար, որը տեղի կունենա 2007թ.-ին:

Ինչպես արդեն խնդիր էր դրվել Խորհրդի կողմից իր 2005թ. մայիսի եզրակացություններում, Հանձնաժողովը մի քանի հատվածներում համագործակցություն է ծավալել միջազգային կազմակերպությունների հետ:

- **Ուսուցիչների մասնագիտական զարգացման /12/** հատվածում Հանձնաժողովը գործակցում է ՏՀԶԿ-ի հետ, որը ներկայումս պատրաստում է ուսումնասիրություն ուսուցիչների վերաբերյալ՝ ընդգրկելով նրանց մասնագիտական զարգացումը:

- **Մեծահասակների հմտությունների /17/** հատվածում Հանձնաժողովը, սերտորեն համագործակցելով անդամ պետությունների հետ, որոշարկել է ԵՄ տվյալների կարիքները: Ներկայումս ուսումնասիրվում է, թե արդյոք մեծահասակների հմտությունների չափաբերման վրա կենտրոնացած ուսումնասիրությունը, որը պատրաստվում է ՏՀԶԿ-ի կողմից, կարո՞ղ է ընդգրկել տվյալների այս կարիքները կամ արդյո՞ք ԵՄ նոր ուսումնասիրության մշակման կարիք կա:

- **Քաղաքացիությանն առնչվող հմտությունների /7/** հատվածում Հանձնաժողովը գործակցում է անդամ պետությունների հետ՝ որոշարկելու տվյալների կարիքները և պատրաստելու եվրոպական մոդուլ քաղաքացիության առաջիկա միջազգային հիմունքների և քաղաքացիության կրթության ուսումնասիրության շրջանակներում, որը կիրականացվի 2008-2009թթ.-ին՝ ներառելու ակտիվ քաղաքացիության համար կրթությանն առնչվող կարիքները:

Պարզ է, որ վիճակագրական ենթակառուցվածքի կապակցվածությունը և երկրների միջև համեմատելի տվյալների երաշխավորման հնարավորությունը կախված են միջազգային այլ կազմակերպությունների կողմից համակարգվող ուսումնասիրություններում անդամ բոլոր երկրների մասնակցությունից: Ճկունության սահմաններում Հանձնաժողովը կերաշխավորի, որ տվյալները տրամադրվում են համաձայն Փորձի եվրոպական վիճակագրական կոդի ուղենիշների, որոնք ևս կօգտագործվեն արդյունքում ստացված տվյալների որակը գնահատելու համար:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհուրդը հրավիրվել է՝

- Հաստատել ցուցիչների շրջանակը Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը չափաբերելու համար
- Ցուցաբերել շարունակական լիարժեք աջակցություն կապակցված շրջանակում անհրաժեշտ նոր ցուցիչների մշակմանը
- Խրախուսել ԵՎՀ տվյալների հավաքագրման կատարելագործմանը, որը պետք է շարունակվի վիճակագրությամբ զբաղվող աշխատանքային համապատասխան խմբերի միջոցով անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ:

Անդամ պետությունները հրավիրվել են՝

- Լիարժեք մասնակցություն ցուցաբերել սույն շրջանակում որոշարկված նոր ցուցիչների մշակմանն առնչվող ուսումնասիրություններում և գործակցել Հանձնաժողովի հետ՝ երաշխավորելու այս ուսումնասիրությունների իրագործումը:

Հանձնաժողովը՝

- Խորհրդին կներկայացնի ուսումնասիրության հանգամանալից առաջարկներ նախքան հիմնական նոր ուսումնասիրությունների մեկնարկը:
- 2007թ.-ին Խորհրդին պատասխան զեկույց կկատարի երիտասարդների օտար լեզվի կարողությունների մասին եվրոպական ուսումնասիրության առաջընթացի վերաբերյալ՝ նկատի առնելով հաջորդական քայլերի վերաբերյալ Խորհրդի եզրակացությունը:
- 2008թ.-ին Խորհրդին պատասխան զեկույց կկատարի ցուցիչների կապակցված շրջանակի իրագործման և նոր ցուցիչների մշակման աշխատանքներին անդամ պետությունների մասնակցության վերաբերյալ՝ բավարարելու ԵՄ տվյալների կարիքները:
- Անդամ պետությունների հետ գործակցության միջոցով կմեկնարկի աշխատանք մինչև 2015թ. արդիականացված բարձրագույն կրթության հատվածին ՀՆԱ առնվազն 2% տրամադրող ԵՄ հենանիշ սահմանելու ճկունության վերաբերյալ:
- Նախքան 2010թ. Խորհրդին պատասխան զեկույց կկատարի 2010թ. համար ԵՄ եվրոպական հինգ հենանիշների վերաբերյալ հետագա գործողությունների մասին և կներկայացնի հենանիշների դերակատարությանն առնչվող առաջարկներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՆՉ ԱՅԺՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ 29 ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԱՆԿ (2003-2006)

(Կրթության 5 հենանիշների չափաբերման ցուցիչները թավատառ են)

1. Ուսուցիչների տարիքը (50տ. ուսուցիչների % հարաբերություն)
2. Երիտասարդների թվաքանակը
3. Աշակերտների և դասավանդող անձնակազմի տոկոսային հարաբերակցությունը
4. **Ավագ միջնակարգ կրթությունն ավարտելը**
5. **Գրաճանաչության ցածր մակարդակ ունեցող ուսանողների % հարաբերությունը (PISA)**
6. 15տարեկան երիտասարդների կատարողականությունն ընթերցանության մեջ (PISA)
7. 15տարեկան երիտասարդների կատարողականությունը մաթեմատիկայում (PISA)
8. 15տարեկան երիտասարդների կատարողականությունը գիտության մեջ (PISA)
9. Սկզբնապես ցածր որակավորում ունեցող մարդկանց մասնակցությունը կրթությանը և ուսուցմանը
10. Բոլոր ՄԳՏ գծով ուսանողների համամասնությունը
11. Բոլոր ՄԳՏ գծով շրջանավարտների % հարաբերությունը
12. **ՄԳՏ բարձրագույն կրթության շրջանավարտների ընդհանուր թվաքանակը (աճ)**
13. ՄԳՏ գծով շրջանավարտների թվաքանակը յուրաքանչյուր 1000-րդ բնակչի համար
14. Կրթությանը հատկացվող պետական ծախսեր
15. Ուսումնական հաստատություններին հատկացվող մասնավոր ծախսեր
16. Ձեռնարկությունների կողմից շարունակական մասնագիտական ուսուցմանը հատկացվող ծախսեր
17. Յուրաքանչյուր աշակերտի համար ուսումնական հաստատություններին հատկացվող ընդհանուր ծախսեր

18. Յուրաքանչյուր աշակերտի համար ուսումնական հաստատություններին հատկացվող ընդհանուր ծախսեր՝ համեմատած ՀՆԱ հետ
19. **25-64տարեկան բնակչության մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը**
20. Բոլոր ձեռնարկությունների մասնակցությունը շարունակական մասնագիտական ուսուցմանը
21. Վերապատրաստող ձեռնարկությունների մասնակցությունը շարունակական մասնագիտական ուսուցմանը
22. Կրթությանը մասնակցող 15-24տ. ուսանողների ցուցանիշները
23. **18-24տարեկան բնակչության շրջանում դպրոցը վաղ լքողների մասնաբաժինը**
24. Աշակերտների տարաբաշխումը՝ ըստ օտար լեզուների իմացության թվաքանակի
25. Օտար լեզուների իմացության միջին թվաքանակը յուրաքանչյուր աշակերտի համար
26. Ուսուցիչների և դասընթացավարների ներքին/արտաքին շարժունությունը, Erasmus+Leonardo
27. Erasmus-ի ուսանողների և Leonardo-ի դասընթացավարների ներքին/արտաքին շարժունությունը
28. Օտարերկրյա բարձրագույն կրթությամբ բոլոր ուսանողների % հարաբերությունը՝ ըստ ազգության
29. Արտասահմանում սովորող հայրենի երկրի ուսանողների տոկոսային հարաբերությունը